

«ՀԱՅՐ ՄԵՐ»-Ի ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ
ԸՍՏ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ

Հայ մեկնողական գրականությունը դարերի պատմություն ունի: Աստվածաշնչի տարբեր գրքերի ու հատվածների մեկնություններին անդրադարձել են ինչպես ոսկեդարյան, այնպես էլ հետագայի մեր մատենագիրները, կրոնական հայտնի դեմքեր: Հայ մեկնողական գրականությունը անընդհատ զարգացել ու կատարելագործվել է: Հայ մեկնիչներն ստեղծել են Աստվածաբանության այս ճյուղի բարձրագույն գործեր, որոնցից շատերն իրենց մակարդակով ու արժեքով չեն զիջում տվյալ ժամանակաշրջանի օտար հեղինակների մամանտիպ աշխատանքներին: Դրանց մեծ մասը առ այսօր, դժբախտաբար, գտնվում է ձեռագիր վիճակում, գրաբար լեզվով և մատչելի չէ Աստվածաբանությանը զբաղվողներին ու հետաքրքրվողներին: Հայ մեկնողական դպրոցի առավել աչքի ընկնող դեմքերը ստեղծել են յուրօրինակ ու բարձրարժեք այնպիսի երկեր, որոնք ունեն ոչ միայն տեղային, այլև համաշխարհային նշանակություն: Մենք համոզված ենք, որ այդ մեկնությունների քննական տեքստերի պատրաստումը, աշխարհաբար թարգմանությունը, հետագայում նաև թարգմանությունը օտար լեզուների ու հրատարակումը այսօրվա համաշխարհային կրոնական մտածողությանը կտա մի նոր լիցք, և միաժամանակ այս կողմից ևս կարժևորվի Հայ Առաքելական Եկեղեցու դերն ու նշանակությունը Աստվածաբանական խնդիրների մեկնաբանման ու ինքնատիպ մոտեցման հարցերում:

Ս. Գրքի մեկնությունները իրենց հիմքում նպատակ ունեն պատասխանելու ժամանակի հուզող Աստվածաբանական ու դավանաբանական բազմաթիվ հարցերի, առավել հանրամատչելի դարձնելու Աստվածային խոսքը, հերքելու Ս. Գրքի առանձին հատվածների ու մտքերի կարծեցյալ հակասությունները: Դրանք միաժամանակ, անշուշտ, կրում են նաև տվյալ ժամանակաշրջանի Աստվածաբանական, փիլիսոփայական, երբեմն նաև քաղաքական հայացքների ազդեցությունները: Մեկնիչների հայացքների վրա ազդեցություն է թողել նաև ժամանակի քաղաքական ու սոցիալ-տնտեսական վիճակը, միջեկեղեցական ու այլևայլ կրոնների հետ եղած տարաձայնություններն ու ընդհարումները, աղանդավորական-հերձվածողական գաղափարախոսությունների դեմ պայքարը և այլն: Հայ մեկնիչների հիմնական նպատակներից է եղել, Աստվածային խոսքը ճշմարտացիորեն մեկնելուց բացի, Հայ Եկեղեցին ու հայ ժողովուրդը զերծ պահել օտար կրոնա-գաղափարական ազդեցություններից, ձուլման վտանգից:

Հայ մեկնողական գրականության ուշագրավ էջերից են Քրիստոսի կողմից ավանդված միակ ամբողջական աղոթքի՝ «Հայր մեր»-ի մեկնությունները: Իզուր չէ, որ այս աղոթքը կոչվում է **Տերունական աղոթք** և արտասանվում է բոլոր Եկեղեցիներում: Այն միաժամանակ նաև Նոր Կտակարանի ամենաուշագրավ էջերից է:

Տերունական աղոթքը գրի է առնվել առաջին դարում՝ ընդարձակ և համառոտ

տեքստերով, Մատթեոս (Ձ 9—13) և Ղուկաս (ԺԱ 2—4) ավետարանիչների կողմից: Տեքստերի ընդարձակ ու համառոտ լինելու պատճառն այն է, որ առաջին ավետարանիչը գրել է առ Աստված աղոթելու սովոր հրեա քրիստոնյաների, իսկ երկրորդը՝ դեռ նոր աղոթել սովորող հեթանոս քրիստոնյաների համար: Սակայն հատկապես հայտնի է այն փաստը, ինչպես և մշտն է Տ. Ներսես քհն. Ներսեսյանը, որ երկու եկեղեցական համայնքներն էլ, իրենց բոլոր տարբերություններով հանդերձ, միանման էին մի կետում՝ սկսման հավատացյալը սովորում էր (և հիմա էլ սովորում է) աղոթել Տերունական աղոթքով*:

Հայ մեկնողական գրականության մեջ «Հայր մեր»-ի մեկնությունները, համեմատած Նոր Կտակարանի մյուս հատվածների մեկնությունների հետ, թվով ամենաշատն են: «Հայր մեր»-ի մեկնության հանդիպում ենք ինչպես Մատթեոսի ու Ղուկասի ավետարանների մեկնություններում, այնպես էլ առանձին գործերով:

Ավետարանի այս հատվածի մեկնությունը հայ մեկնողական գրականության մեջ որոշակի զարգացում է ապրել: Այսպես, ոսկեդարյան մեկնիչի՝ Եղիշեի մոտ որոշակիորեն ընդգծված է քարոշախրատական գիծը: Վերցնենք աղոթքի առաջին տողը՝ «Հայր մեր, որ լերկինս ես»: Նախ, Եղիշեն մշտն է, որ ավանդելով Աստծուն Հայր անվանել, Քրիստոս ցույց տվեց իր անսահման գույքը մարդկանց հանդեպ: Սակայն որդիներն էլ պիտի լինեն Հոր կամքի համաձայն, և այդ դեպքում միայն Հայրը կհոգա նրանց կարիքները: Եղիշեն այնուհետև հակիրճ կերպով և յուրովի անդրադառնում է նաև այս տողի դավանաբանական կողմին. «Մեկ է ճշմարիտ Հայրը և ողջ աշխարհի արարիչը: Առանց կրքի հղացավ, առանց ցավերի ծնեց բոլոր երեւոյց և աներևոյթ բաները: Ով որ ծնվեց, հենց Նա էլ (Քրիստոս) գալով ուսուցանում է որդիներին՝ դիմելու երկնավոր Հորը, որպեսզի աշխարհը տեսապես չմնա խանձարոտի ու օրորոցի մեջ»: Այնուհետև մշտն է, որ Աստված տեսավ իր որդիների (մարդկանց) տառապանքներն ու առ Աստված վերադարձի ճանապարհներ որոնելը, գթաց նրանց և երկնքից երկիր իջավ: Աստծուն Հայր կոչելը մեծագույն պարգևն է մարդու համար, որի համար մարդ պետք է զգույշ լինի, մարմնական ցանկություններով չպիտի ընկղմվի երկրային «բաների» մեջ:

* Վրեժ արկ. Ներսեսյան, «Նոր Կտակարանեան ուսումնասիրութիւններ», Աթոքիս, 1981 թ., էջ 46:

Ուստի Եղիշեն հետևյալ խորհուրդն է տալիս. «Կտրիր, դեռ մետիր քեզնից ավելորդ ցանկությունները: Անհրաժեշտ ուտելիքներով բավարարվիր: Խախտումներ մի արա և մի շվայտացիր: Գիրություն հետևանքով ցանկությամբ է լցվում մարդ, և շատ ճարպից անօրենություններ են առաջանում, ինչպես հարբեցողությունից՝ պիղծ գիշությունը: Այնպիսին Աստծուն Հայր չի կարող անվանել»**: Ինչպես երևում է, Եղիշեի նպատակն է ավելի իր ընթերցողին դաստիարակել քրիստոնեական ոգով, քան թե խորանալ Աստվածաբանական-դավանաբանական խնդիրների մեջ:

Ստ. Այունեցին (7—8-րդ դդ.) բավարարվում է այս տողի միայն «երկնքում ես» արտահայտության հակիրճ և բավական մակերեսային բացատրությամբ. «Երկնքում բնակություն ունենալը նրա համար է ասում, թեպետև ամբողջովին երևելի աշխարհում է, որ միայն զորությամբ (է), որովհետև այս աշխարհի ամենապատվական և ամենահրաշափառ մասը երկինքն է»***:

Գրիգոր Նարեկացուն վերագրվող «Հայր մեր»-ի մեկնությունը ընդարձակ է, կան Աստվածաբանական — դավանաբանական լուրջ դիտարկումներ, գեղեցիկ համեմատություններ: «Հայր» ասելը այստեղ բնորոշվում է որպես «քաղցր, պարծ և շնորհալի անուն», չորս տառերից կազմված մի միասնություն, ինչպես որ մեկ են երեք անձինք: Այնուհետև անդրադառնում է Ս. Երրորդության հարցին: Քրիստոս սովորեցրեց աղոթել և ասել «Հայր մեր», որովհետև եթե որևէ մեկը աղոթելիս լինի մույնիսկ անապատում կամ ծովի խորքերում, մեռնական մեջ, միշտ իր աղոթքում հիշի նաև բոլոր քրիստոնյաներին, որոնք Քրիստոսի անդամներն են: «Մեր» ասելով բոլոր քրիստոնյաներն ամանվում ենք ամուր քաղաքի ու անշարժ, հաստահիմն աշտարակի, քանի որ բոլորի Հայրը մեկ է: Իսկ երբ ասում ենք «Երկնքում ես», ոչ թե Աստվածային անբովանդակելի բնությունը սահմանափակում ենք, այլ որպեսզի Աստված մեզ հենու պահի երկրային ցնորքներից ու աշխարհի անցավոր պատրանքներից և դեպի երկինք ուղղի մեր միտքը, ուր անմահների ու հավիտենականների բնակարանն է: Եր-

** Անանիա վրդ. Արաբաջյան, «Ուղղափառ վարդապետ և անհաղթ փիլիսոփա երանելի Եղիշեի Տերունական աղոթքի՝ «Հայր մեր որ լերկինս»-ի մեկնությունը», «Էջմիածին», 1983 թ., Բ—Գ, էջ 55—56:

*** Երևանի Ս. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. հմթ. 1800, էջ 246բ:

կինքն այն դրախտն է, որ գտնվում էինք մեր անմեղ եղած ժամանակ և այլն****:

Այլ է Տաթևացու մոտեցումը: Այստեղ գերակշռում է կոտ տրամաբանությունը: Տաթևացին մեկնում է ինչպես հատվածի ընդհանուր մտքից ելնելով, այնպես էլ յուրաքանչյուր բառի իմաստին ու նշանակությանը անդրադառնալով: Նա աշխատում է որևէ պակաս, բաց տեղ չթողնել: Միջնադարի դպրոցին հատուկ հարց ու պատասխանի միջոցով Տաթևացին, Աստվածաբանական խնդիրների վերաբերյալ Հայ եկեղեցու դավանաբանական մոտեցման տեսակետից, բացատրում է Աստվածային խոսքը ամենայն մանրակրկիտությամբ: Նա մեկնում է տող առ տող, բառ առ բառ, հաճախ մեկ բառի մեկնաբանման համար տալով տասից ավելի բացատրություններ: Այսպես, «Հայր մեր որ յերկինս ես» տողը նախ նա մեկնում է բառ առ բառ: Ըստ Տաթևացու, Աստված Հայր է կոչվում ըստ բնության, ըստ արարչության, ըստ նորոգության, ըստ իմաստության, ըստ խնամքի և գթության և ըստ ժառանգության: Նա իր այս բնորոշումները սահմանում է Աստվածաշնչական հիմնավորումներով: Սակայն քրիստոնյաների համար Աստված Հայր է կոչվում նաև այլ պատճառներով. նախ, որովհետև բնությանը Որդուն եղբայր կոչվեցինք և Սուրբ Հոգին ընդունեցինք, երկրորդ, որովհետև Աստծու պատկերը կորցրեցին մարդիկ և մենք (քրիստոնյաներս) եղանք Աստծու Որդու պատկերին կերպարանակից և այլն: Բայց այսքանով էլ չի բավարարվում Տաթևացին: Նա շարունակում է, ասելով, որ Հայր ասելը բոլոր երանություններն է նշանակում, որ ընդունեցինք ավագանում: Իսկ ավագանում մենք սկզբնական մեղքի թողությունն ենք ստանում, ազատվում պատիժներից, ստանում արդարության շնորհը, փրկվում «թշնամուց», Միածնի հետ եղբայրանում, ընդունում Սուրբ Հոգու բոլոր պարգևները և այլն: Այսպես, բառ առ բառ այս տողի մեկ-

նությունը վերջացնելով, Տաթևացին մեկ անգամ ևս անդրադառնում է դրան, աշխատելով ամփոփել իր միտքը: Ահա այդ հատվածը. «Դարձյալ. Հայր-ը ցույց է տալիս, որ իմաստուն է և հիմնավոր: Մեր-ը Նրա գութն է մեր հանդեպ: Իսկ երկնքում-ը՝ կարող գորությունը: Որեմն պարզ է, որ գիտի, թե իմաստուն է: Եվ քանի որ գթում է՝ կամենում է: Եվ գորավոր է, այսինքն կարող է մեզ տալ այն ամենը, ինչ խնդրում ենք: Սա առաջին խոսքն է գովության և նվերի մասին»:

Գր. Տաթևացուց մեզ է հասել «Հայր մեր»-ի երկու մեկնություն: Այս մեկնությունը, որ ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությունը, վերցված է նրա չորս ավետարանների մեկնությունից: «Զմեռան հատոր»-ում պահպանվել է ևս մեկ մեկնություն, սակայն վերագրված անհայտ հեղինակի. «Յալմե դարձեալ առաջին ատուրն, ի բանն՝ յորժամ յաղօթս կայցեք, ասասցիք, «Հայր մեր որ յերկինս ես և այլն»: Ինչպես երևում է, այս մեկնությունը համարվում է «Յալմե»՝ ուրիշ հեղինակի կողմից գրված: Սակայն առաջին հայացքից իսկ երևում է, որ սա նույնպես Տաթևացու գրչին է պատկանում, պարզապես ավելի ընդարձակ է: Լեզվական մեծությունները, մտածելաձևեր, յուրատիպ հարց ու պատասխանի առկայությունը, հաճախ որոշ մտքերի, նույնիսկ բառացի մեծությունները գալիս են ասելու, որ այս մեկնությունը նույնպես Տաթևացու գրչին է պատկանում: Տաթևացին այստեղ օգտագործել է բազմաթիվ այլ մեկնություններ: Այս մասին նա, իր սովորության համաձայն, որոշակիորեն գրում է՝ «ասեն վարդապետք»: Տաթևացին երկու անգամ է անդրադարձել (համատոտ և ընդարձակ) ոչ միայն Տերունական աղոթքի, այլ նաև սաղմոսների մեկնությանը: Կարելի է, անշուշտ, տարբեր կարծիքներ ևս հայտնել: Սակայն մեր ենթադրությունը հիմնավորելու համար բերենք Տաթևացու չորս ավետարանների մեկնության «Հայր մեր»-ի հատվածի և քարոզգրքում պահպանված մեկնության մի քանի տողերի համեմատությունը.

**** Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. հմր. 5758, էջ 37ա—38ա:

Մեկնություն Մատթեի

Այլ այս աղօթս գերագույն է ամենեցուն: Վասն չորից. Նախ.—Ձի Աստուածուսոյց է.

Երկրորդ.—Ձի կարճատոտ է:

Զմեռան հատոր

Վարդապետք ասեն թե, աղօթս այս յոյժ պատուական է և գովելի վասն Գ պատճառի. Նախ. ի Բրիստոսէ է սահմանած:

Երկրորդ.—Ձի կարճ է և գեղեցիկ. և ոչ որ կարէ պատճառել չուսանիլ վասն երկարության:

Երրորդ.—Ձի հարկատու է ամենայն մարդու:

զի պատուական է հոգին քան զմարմինն:

Հայր կոչի Աստուած վեց կերպի.
Ըստ արարչութեան. «Ո՛չ սա ինքն է հայրն քո, որ արարն զքեզ» (Բ Օրինաց ԺԲ 6):

Յատուկ ուսոյց մեզ զԱւետարանն և զգիտութիւն Սուրբ Երրորդութեանն:

Որպէս յերկինքն ի մէջ հրեշտակացն կատարեալ է Քո կամքդ, նոյնպէս ի մեզ կատարեալ լիցի:

Աւրբատարէ (հանապազորդ) ասէ: Եւ «որդն» անպակաս: Այսինքն միշտ տուր և ոչ թէ վաճառեա: Նախ, զի ձրի տայ: Երկրորդ, պարտական է տալոյ՝ որ ստեղծ մարմին, և ետ քերան:

Ջխոնարհութիւնն ուսուցանէ՝ մի յանդուգըն երթալ ի փորձութիւն:

Երրորդ.—Ձի հարկատու է և բեղմնատու, զի ամենայն ինչ որ մեզ պիտոյ է, թէ հոգևոր և թէ մարմնատու, աղօթիւք այս խղճութեալ լինի:

զի հոգին պատուական է քան զմարմինն:

Եւ գիտելի է, զի վասն բազում պատճառի ասելի է Հայր մեր.

Ձի հայր կոչեմք զնա ըստ արարչութեան. զի ի նմանէ ստեղծաք և ի լէութենէ եկաք յոչէից: Եւ մեզ առաւել՝ զի պատկերակցութեամբ զարդարեցաք:

Ունիմք զուսումն և զիմաստութիւն, զի ուսոյց զմեզ օրինօք և աւետարանաւ:

Որպէս հրեշտակք և սուրբք որք առ քեզ են, և առնեն զկամս քո, այսպէս և մարդիկ որք յերկրի են, թողցեն զկամս իրեանց և արասցեն զկամս քո:

Ձի ասելովն թէ տուր՝ բառնայ զդժգոհութիւնն, թէ ոչ պարտ է անգոհ լինիլ զԱստուծոյ. զի ոչ ասեմք թէ վաճառեա մեզ հաց. այլ թէ տուր ձրի:

Առ ի ցածուցանել զհպարտութեան բարս մեր. զի մի տա խրոխտալով տացուք զանձինս մեր ի փորձութիւն և վրիպեալ յաղթիցիմք, և այլն****:

**** «Գիրք քարոզութեան որ կոչի Ձմեռան հատոր, Արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացոյ եօթնալոյս Վարդապետի», Կ. Պոլիս, 1740 թ., էջ 309—314:

*
*
*

Ստորև ներկայացնում ենք Գրիգոր Տաթևացոյ «Հայր մեր»-ի մեկնությունը՝ քաղված Մատթեոսի ավետարանի իր մեկնության համապատասխան հատվածից: Այս մեկնությունից միայն Երևանի Մաշտոցի ամվան Մատենադարանում պահպանվել են հարյուրից ավելի ձեռագրեր՝ արտագրված տարբեր ժամանակներում: Քննական բնագիրը կազմելու համար մենք ընտրել ենք հետևյալ չորս հմագույնները. ձեռ. հմր. 1198, թվագրված 1413 թ., 1264, թվագրված 1416 թ., 1266, թվագրված ԺԵ դար և 1300, թվագրված 1456 թ.: Համապատասխանաբար ձեռագրերը համարակալել ենք՝ Ա, Բ, Գ, Դ: Ա ձեռագրում «Հայր մեր»-ի

հատվածը ընդգրկում է 331ա—338ա, Բ ձեռագրում՝ 115բ—119ա, Գ ձեռագրում՝ 118ա—122ա, Դ ձեռագրում՝ 112ա—116ա էջերը:

Քննական բնագիրը կազմելիս, գործը չծանրաբեռնելու նպատակով, չենք անդրադարձել լեզվական և ուղղագրական այնպիսի տարբերություններին ու վրիպակներին, որոնք չեն անդրադառնում մտքի կամ ասելիքի փոփոխմանը:

Ավելացնենք նաև, որ ինչպես հայ մեկնողական գրականության մեջ գոյություն ունեցող «Հայր մեր»-ի մյուս, այնպես էլ «Ձմեռան հատոր»-ում պահպանված մեկնությանը կանոնադրաբար մեր հետագա հոդվածներում՝ ավելի ընդարձակ կերպով:

Ի ՀԱՅՐ ՄԵՐ ՅԵՐԿԻՆՍ

ԵՒ ԱՐԴ. ՍՈՅՆՊԷՍ ԿԱՑԷՔ ՅԱՂԹԹՄ
ՀԱՅՐ ՄԵՐ (Մատթ. 2 9)

- 5 Անդ (տես Մտթ. 2 5—9) որոշեաց
ի հրէից եւ զձն աղօթիցն ուսոյց: Աստ
որոշեաց ի հեթանոսաց և զքան աղօ-
թիցն ուսուցանէ: Գիտելի է, զի ամե-
նայն աղօթք պատուական են և հրեշ-
տակաց հաւասար առնեն: Այլ այս ա-
ղօթքս գերագոյն է ամենեցուն: Վասն
չորից.

Նախ.—Ձի Աստուածուսոյց է:

Երկրորդ.—Ձի կարճատուս է:

- 15 Երրորդ.—Ձի հարկատու է ամենայն
մարդոյ:

Չորրորդ.—Ձի բեղմնատու է և ամե-
նայն բարութեամբ հոգոյ և մարմնոյ
լցեալ է:

- 20 Եւ դարձեալ, որպէս դաւանութիւն
հաւատոյ ժ բան է և օրէնքն ժ բան,
սոյնպէս և այս աղօթքս ժ բան է: Եւ
է գլխատու խնդիր գոյ ի ամա՛ Գ հոգե-
տու և Դ մարմնատու:

ՍԱՀՄԱՆ ԱՂԹԹԻՑ

- 25 Հարց.—Ձի՞նչ է աղօթք:
Պատասխան.—Աղօթք խօսք է ընդ
Աստուծոյ: Դարձեալ, աղօթք է հայ-
ցումն բարեաց առ ի յԱստուծոյ:

Առաջինն.—Ձմեր նուէրքն նշանակէ:

- 30 Երկրորդն.—Ձպարզեքն յԱստուծոյ:

Հայր կոչի Աստուած վեց կերպիւ.

Նախ.—Ըստ բնութեան, որպէս Որդ-
ւոյ ծննդեան և Հոգւոյ բխուման:

- 35 Երկրորդ.—Ըստ արարչութեան. ո՛չ
սա ինքն է հայրն քո, որ արարն զքեզ
(Բ Օրինաց ԼԲ 6):

Երրորդ.—Ըստ նորոգութեան, որ
ստեղծ յոչնչէ՛՛ նորոգէ յապականութե-
նէ:

- 40 Չորրորդ.—Ըստ իմաստութեան և
ուսման. «Աստուած իմ ուսուցեր զիս
ի մանկութենէ» (Սղմ. Հ 17):

28. Գ—Հայցումն բարեաց առնուլ զպարզեքն
յԱստուծոյ: Բ.—Աստուծոյ:

«ՀԱՅՐ ՄԵՐ ՈՐ ԵՐԿԻՆՈՒՄ ԵՍ»
ԱՂԹԹՔԻ ՄԱՍԻՆ

ԵՎ ԱՐԴ. ԱՅՍՊԵՍ ԱՂԹԵՑԵՔ.
ՀԱՅՐ ՄԵՐ

Այնտեղ զատորոշեց հրեաներից և
աղոթքի ձևը սովորեցրեց: Այստեղ
զատեց հեթանոսներից և աղոթքի
խոսքն է սովորեցնում: Գիտենք, որ
ամեն մի աղոթք պատվական է և
հրեշտակներին հաւասար է դարձ-
նում, բայց այս աղոթքը գերագոյն է
բոլորից: Չորս պատճառով.

Նախ.—Որովհետև Աստուծո կող-
մից է ուսուցվել:

Երկրորդ.—Որովհետև համառոտ է:

Երրորդ.—Որովհետև հարկավոր է
ամեն մի մարդու:

Չորրորդ.—Որովհետև բեղմնավոր
է և հոգու ու մարմնի բոլոր բարու-
թյուններով լեցուն:

Եւ դարձալ՝ ինչպէս հավատքի
դավանությունը և օրենքը բաղկացած
են տասը բանից, այսպէս էլ այս ա-
ղոթքը տասը բան է: Եւ յոթ գլխավոր
խնդիր (կես) կա սրա մեջ. երեքը՝
հոգևոր, և չորսը՝ մարմնավոր:

ԱՂԹՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Հարց.—Ի՞նչ է աղոթքը:

Պատասխան.—Աղոթքը խոսակցու-
թյուն է Աստծու հետ: Դարձալ, ա-
ղոթքը բարիքների հայցումն է Աստ-
ծուց:

Առաջին.—Մեր նվերներն է նշանա-
կում:

Երկրորդ.—Աստուծոյ [տրված]
պարզեքները:

Աստված Հայր է կոչվում վեց կեր-
պով.

Նախ.—Ըստ բնության, ինչպէս Որ-
դու ծնունդը և Հոգու բխումը:

Երկրորդ.—Ըստ արարչության. Սա
ինքն քո Հայրը չէ՛, որ քեզ արարեց:

Երրորդ.—Ըստ նորոգության, որ
ստեղծեց ոչնչից և նորոգում է ապա-
կանությունից:

Չորրորդ.—Ըստ իմաստության և
ուսման. «Ի՛մ Աստված, սովորեցրի
իմ իմ մանկությունից»:

31. Գ—Հայր մեր կոչի:

42. Ա—2իք ի մանկութենէ:

Հինգերորդ.—Խնամոց և գթութեան.
45 «Աչք ամենեցուն ի քեզ յուսան և դու
տաս կերակուր անցա ի ժամու» (Սղմ.
ՇԽԴ 15):

Վեցերորդ.—Ըստ ժառանգութեան
հայր անցա. «Ուստի անառակ որդին
50 բաժանեաց զկեանսն» (համեմատիր
Ղուկ. ԺԵ 12):

Եւ սոքօք յատուկ Հայր կոչի քրիս-
տոնէից:

Նախ.—Ձի բնութեամբ Որդոյն եղ-
բայր կոչիմք և զՀոգին Սուրբ ընկա-
55 յալք: Վասնորոյ յատուկ մեք կոչիմք
որդիք: Ըստ այնմ. Հայր՝ իմ բնու-
թեամբ, և ձեր կոչմամբ: Աստուած՝ իմ
կոչմամբ և ձեզ բնութեամբ:

Երկրորդ.—Ձի զպատկերն Աստու-
60 ծոյ կորուսին մարդիկ. «Մեք կերպա-
րանակից եղաք պատկերի Որդոյ Նո-
րա» ասէ (հմմտ. Հոմմ. Ը 29):

Երրորդ.—Մարմնաւոր ծնաք ապա-
կանացու, աւազանսն անորոգիմք յա-
65 պականութենէ:

Չորրորդ.—Յատուկ ուսոյց մեզ զԱ-
ւետարանն և զգիտութիւն Սուրբ Եր-
րորդութեանն:

Հինգերորդ.—Ետ կերակուր մեզ
70 զմարմին և զարիւնն իւր սուրբ:

Վեցերորդ.—Ետ մեզ զերկնաւոր
ժառանգութիւնն: Ըստ այնմ. «Որում
Հայր ուխտեաց ինձ, և ես ձեզ ուխ-
տեմ» (հմմտ. Ղուկ. ԻԲ 29):

Դարձեալ, Հայր ասելն զամենայն
երանութիւնսն նշանակէ, զոր ընկա-
յալք յաւազանն:

Նախ.—Ձթողութիւն սկզբնական
մեղաց:

80 Երկրորդ.—Ջազատութիւն պատժոց:

Երրորդ.—Ջարդարութեան շնորհն:
Չորրորդ.—Ջարբութիւն ներգործա-
կանին:

Հինգերորդ.—Ջիրկութիւն ի թշնամ-
85 ւոյն:

Վեցերորդ.—Ջեղբայրութիւն Միած-
նին:

Յոթներորդ.—Ջալարգևքս Հոգւոյն
Սրբոյ զանազան:

90 Միով բանի զայս ամենայն յայտնէ:

Հինգերորդ.—Ըստ խնամքի և գթու-
թյան. «Բոլորի աչքերը քեզ են նա-
յում հույսով, և դու նրանց կերակուր
ես տալիս ժամանակին»:

Վեցերորդ.—Նրանց հայրն [է] ըստ
ժառանգության. «Որտեղ (ինչպես)
անառակ որդին բաժանեց ունեցված-
քը»:

Եվ սրանցով հատկապես քրիստոն-
յաների Հայր է կոչվում.

Նախ.—Որովհետև բնութեամբ եղ-
բայր ենք կոչվում Որդուն, և Սուրբ
Հոգին ընդունեցինք: Այդ պատճառով
ենք մենք հատկապես որդիներ կոչ-
վում: Ըստ այնմ. Իմ Հայրն է բնու-
թեամբ և ձերը՝ կոչումով: Իմ Աստ-
վածն է կոչումով և ձերը՝ բնութեամբ:

Երկրորդ.— Որովհետև մարդիկ
կորցրին Աստծու պատկերը. «Մենք
կերպարանակից եղանք նրա Որդու
պատկերին», ասում է [առաքյալը]:

Երրորդ.—Մարմնապես ապականա-
ցու ծնվեցինք, ավազանով (մկրտու-
թեամբ) մաքրվում ենք ապականու-
թյունից:

Չորրորդ.—Հատկապես մեզ ուսու-
ցանեց Ավետարանը և Սուրբ Երրոր-
դության գիտությունը:

Հինգերորդ.—Իր սուրբ մարմինն ու
արյունը մեզ կերակուր տվեց:

Վեցերորդ.—Մեզ տվեց երկնավոր
ժառանգությունը: Ըստ այնմ. «Ինչ որ
Հայրն ուխտեց ինձ, ես էլ ձեզ եմ ուխ-
տում»:

Դարձյալ. Հայր ասելը նշանակում
է այն բոլոր երանությունները, որ ըն-
դունեցինք ավազանով.

Նախ.—Սկզբնական մեղքերի թո-
ղությունը:

Երկրորդ.—Պատիժներից ազատվե-
լը:

Երրորդ.—Արդարության շնորհը:

Չորրորդ.—Ներգործումի սրբություն-
նը:

Հինգերորդ.—Փրկությունը թշնա-
մոց:

Վեցերորդ.—Միածնին եղբայր լի-
նելը:

Յոթերորդ.—Սուրբ Հոգու զանա-
զան պարգևները:

Այս բոլորը հայտնում է մի խոսքով
(հայր):

45. Դ—2իք տաս կերակուր անցա ի ժամու:

47. ԲԳ—ժառանգութեան հայրենեաց:

70. Դ—2իք իւր:

72. ԱԲԳ—2իք այնմ:

Հարց.—Ջինչ է յերկինս ասելն:

Պատասխան.—Ոչ թէ զԱստուած անդ փակէ, զի Աստուած մեր յերկինս և յերկրի է, այլ Դ իր ցուցանէ.

95 **Նախ.**—Զբարձր վայելչութիւն փառացն:

Երկրորդ.—Զամենագօր կարողութիւնն:

100 **Երրորդ.**—Զմիտս աղօթողին յերկինս յամբառնայ:

Չորրորդ.—Զառաջին բնականութիւնն յերկնից խոստանայ:

Հարց.—Վասն էր ասեմք մեր:

Պատասխան.—Վեց իմն նշանակէ.

105 **Նախ.**—Զի իմ ասելն բնութեամբ Որդւոյն է յատուկ, իսկ մերն մեզ պատշաճի:

Երկրորդ.—Զի բարձրէ զազահութիւն և վասն ամենայն մարդոյ յաղաշէ:

110 **Երրորդ.**—Բառնայ զատելութիւն և հաստատէ զսէր:

Չորրորդ.—Բառնայ զհպարտութիւն և տնկէ զխոնարհութիւն:

115 **Հինգերորդ.**—Ցուցանէ զամենեցուն հաւասարութիւն:

Վեցերորդ.—Զի յորժամ հասարակ աշխարհի աղօթեմք՝ ամենեցուն աղօթից կցորդիմք:

120 **Դարձեալ, Հայրն՝** ցուցանէ, զի իմաստուն և հինաւորց, մերն՝ զգութն ի վերայ մեր, իսկ յերկինս՝ զկարող գորութիւնն: Յայտ ուրեմն է, գիտէ, զի իմաստուն է: Եւ զի գթայ կամի:

125 Եւ զօրաւոր է, կարէ զամենայն ինչ, զոր խնդրեմք՝ տալ մեզ: Այս առաջին բան, որ է գովութիւն և նուէրք:

ՍՈՒՐԲ ԵՂԻՑԻ ԱՆՈՒՆ ԶՈ

Չորս իմն նշանակէ.

130 **Նախ** քան զամենայն ինչ պարտ է խնդրել մեզ զփառս Աստուծոյ, զի սուրբն փառաւոր լի:

Երկրորդ.—Թէ ոք ասէ՝ առանց քո բանիդ ո՛չ է փառաւոր, ասեմք, թէ փառաւոր է բնութեամբ: Այլ աղա-

135

Հարց.—Ի՞նչ է երկնքում ասելը:

Պատասխան.—Ոչ թէ Աստուծոյն այնտեղ է փակում, որովհետեւ մեր Աստվածը երկնքում և երկրում է, այլ չորս իրողություն է ցույց տալիս.

Նախ.—Փառքի բարձր վայելչությունը:

Երկրորդ.—Ամենագոր կարողությունը:

Երրորդ.—Աղոթողի միտքը երկինք է բարձրացնում (ուղղում):

Չորրորդ.—Նախկին բնականությունը երկնքից է խոստանում:

Հարց.—Ինչո՞ւ ենք ասում մեր:

Պատասխան.—Վեց իրողություն է նշանակում.

Նախ.—Որովհետեւ իմ ասելը բնութեամբ Որդուն է հատուկ, իսկ մերը պատշաճում է մեզ:

Երկրորդ.—Որպեսզի վերացնի ազահությունը, աղոթում է բոլոր մարդկանց համար:

Երրորդ.—Վերացնում է ատելությունը և հաստատում սէր:

Չորրորդ.—Վերացնում է հպարտությունը և խոնարհություն սերմանում:

Հինգերորդ.—Ցույց է տալիս բոլորի հավասարությունը:

Վեցերորդ.—Որովհետեւ երբ ընդհանրական աշխարհում ենք աղոթում, միանում ենք բոլորի աղոթքին:

Դարձեալ, Հայրը ցույց է տալիս, որ իմաստուն է և հինաւորց, մերը, նրա գութն է մեր հանդեպ, իսկ երկնքում՝ կարող գորությունը: Ուրեմն պարզ է, որ գիտի, թէ իմաստուն է: Եվ քանի որ գթում է՝ կամենում է: Եվ զորաւոր է, [այսինքն] կարող է մեզ տալ այն՝ ամենը, ինչ խնդրում ենք: Սա առաջին խոսքն է գովութեան և նվերի մասին:

ԹՈՂ ՍՈՒՐԲ ԼԻՆԻ ԶՈ ԱՆՈՒՆԸ

Չորս իրողություն է նշանակում.

Նախ.—Ամեն ինչից առաջ մենք պետք է Աստծու փառքը խնդրենք, քանի որ սուրբը փառաւոր է նշանակում (ընկալվում):

Երկրորդ.—Եթե որեւէ մեկն ասի՝ առանց քո խոսքի փառաւոր չէ՞, կասեմք՝ փառաւոր է բնութեամբ: Բայց

109. ԳԴ.—2իք մարդոյ:

120. Գ.—զիմաստուն:

122. Գ.—զկարողութիւնն փխ. զկարող գորութիւնն:

127. Գ.—2իք բան:

չենք, զի փառաւորեացի ի կեանս և ի վարս մեր, որպէս ասաց Տէր. «Տեսցեն զգործս ձեր բարիս եւ փառաւորեացեն զՀայր ձեր» (Մատթ. Ե 16):

140 Ձի վասն ծուլիցն ասէ. «Անուն իմ վասն ձեր հայրոյի ի մէջ հեթանոսաց» (Եսայի. ՄԲ 5):

Երրորդ.—Սուրբ է անուն քո և սրբաբար: Եղիցի և մեզ, զի սրբեացէ

145 զմեզ յամենայն մեղաց:

Չորրորդ.—Քրիստոնէայ կոչիմք և հաւատով սուրբ ենք: Նոյնպէս և գործով զմեզ սուրբ արա:

Այս երկրորդ բանն:

150 ԵՐՐՈՐԴՆ. ԵԿԵՍՑԷ
ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ՔՈ

Եւ այս ևս բարի որդւոյն է, որ ոչ բնեոյ սիրով յերևելիսս, այլ զհանդերձեալ արքայութիւնն խնդրել: Դարձեալ, խնդրենք զարքայութիւնն Աստուծոյ վասն չորից.

Նախ.—Ձի փրկեացէ զմեզ յիշխանութենէ խաւարին:

160 Երկրորդ.—Ձի թագաւորէ ի վերայ մեր, և ոչ մեղք:

Երրորդ.—Ի բռնաւորաց փրկեացէ, որպէս զԻզրաէլ ի փարաւոնէ:

165 Չորրորդ.—Ի ծամ աղօթից դէք պատեալ պաշարեալ պահեն զմեզ: Յործամ խնդրենք զթագաւորութիւնն Աստուծոյ՝ կորնչին դէք, որպէս խաւար ի լուսոյ:

Դարձեալ, յոմանս թարգմանեալ է, եթէ՝ եկեացէ հոգի քո սուրբ: Այս ցուցանէ, թէ Հոգին Սուրբ արքայ և տէր է, ընդ Հօր և ընդ Որդոյ հաւասար:

170 Եւ սոյնպէս ի դէմս Սուրբ Երրորդութեանն է խօսեցեալ. առաջինն ի Հայր, երկրորդն՝ յՈրդի, երրորդն՝ ի

175 Հոգին Սուրբ:

ՉՈՐՐՈՐԴՆ. ԵՂԻՑԻՆ ԿԱՄՔ
ՔՈ, ՈՐՊԷՍ ՅԵՐԿԻՆՍ ԵԻ
ՅԵՐԿՐԻ

180 Չորս ինչ նշանակէ.

Նախ.—Թէ կամացդ Քո ոչ ինչ է հակառակ, որ արգելու զմեզ ի կարգ երկնաւոր զօրացն մտանէլ:

139. Բ—2իք ձեր, ձեր, Ա—2իք զՀայր ձեր:

140. ԱՂ—ծառայիցն փխ. ծուլիցն:

144. ԱԲԳ.—ի մեզ:

145. Գ.—ի մեղաց փխ. յամենայն մեղաց:

152. Դ.—որդւոյն:

աղաչում ենք, որպէսզի փառաւորվի մեր կյանքում և մեր վարքում, ինչպէս ասաց Տէրը. «Կտեսնեն ձեր բարի գործերը և կփառաւորեն ձեր Հորը»: Որովհետև ծուլի համար ասում է. «Իմ անունը ձեր պատճառով հայհոյվում է հեթանոսների մեջ»:

Երրորդ.—Սուրբ է անունը քո և սրբաբար. թող մեզ վրա էլ լինի, որպէսզի սրբի մեզ բոլոր մեղքերից:

Չորրորդ.—Քրիստոնյա ենք կոչվում և հավատով սուրբ ենք: Նոյնպէս և գործով մեզ սուրբ արա:

Սա երկրորդ խոսքն է:

ԵՐՐՈՐԴԸ. ԹՈՂ ԳԱ ՔՈ
ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Եվ այս էլ բարի որդու համար է, որ սիրով անշարժ [վիճակում] չի մնում երևելիների մեջ, այլ հանդերձալ արքայություն է խնդրում: Դարձալ. Աստծու արքայությունն ենք խնդրում չորս պատճառով.

Նախ.—Որպէսզի մեզ փրկի խաւարի իշխանությունից:

Երկրորդ.—Որպէսզի ինքը թագաւորի մեզ վրա, և ոչ՝ մեղքը:

Երրորդ.—Բռնաւորից փրկի, ինչպէս Իզրայէլին՝ փարաւոնից:

Չորրորդ.—Աղօթքի ժամանակ դէվերը շրջապատած պահում են մեզ: Երբ խնդրում ենք Աստծու թագաւորությունը, դէները անհետանում են, ինչպէս խաւարը՝ լուսից:

Դարձալ. ոմանց կողմից թարգմանված է. «**Թող գա Քո Սուրբ Հոգին**»: Սա ցույց է տալիս, թէ Սուրբ Հոգին Արքա է ու Տէր, Հորը և Որդուն հավասար: Այսպէս էլ Սուրբ Երրորդության առիթով է ասված. առաջինը՝ Հայր, երկրորդը՝ Որդի, երրորդը՝ Սուրբ Հոգի:

ՉՈՐՐՈՐԴԸ. ԹՈՂ ԼԻՆԻ ՔՈ ԿԱՄՔԸ
ԵՐԿՐԻ ՎՐԱ, ԻՆՉՊԵՍ ԵՐԿՆՔՈՒՄ Է

Չորս բան է նշանակում.

Նախ.—Թե ոչինչ չկա Քո կամքին հակառակ, որն արգելի մեզ երկնային զորքերի կարգը մտանէլ:

153. Բ—2իք սիրով:

163. Ա—2իք դէք:

165. Բ—խնդրեն:

172. ԳԴ—2իք Սուրբ:

Երկրորդ.—Որպես յերկինքն ի մէջ
185 հրեշտակացն կատարեալ է Քո կամ-
քը, նոյնպէս ի մեզ կատարեալ լիցի:

Երրորդ.—«Որպէս յերկինս, նոյն-
պէս յամենայն երկրի քակտեացի մո-
լորութիւն, մեղք և տնկեացի ճշմար-
տութիւն և արդարութիւն» (հմմտ. Ե-
րեմիա ԼԱ 28):

200 Զորրորդ.—Որպէս զամենայն երկ-
նաւորս և գերկրաւորս խնամես, նոյն-
պէս և զիրաքսանչիր ի մէջ խնա-
մես, զի երկնային եմք հոգով և երկ-
195 րաւոր՝ մարմնով:

Այս Դ բանս հոգևոր խնդիր է: Այլ
սոքա աստ մասնաւոր լինին: Իսկ կա-
տարելապէս ի հանդերձեալն՝ յորժամ
200 յառնենք ի հողոյ և լինիմք յարութեան
որդիք, և գալ Աստուած ի մէջ Աստ-
ուածացելոց և ընդ նմին թագաւորեն:
Եւ կատարեալ կամօք, սիրով, որպէս
Դու Հայր ի յիս և սոքա ի մեզ իցեն՝
անգրաւ յափտենիս: Ամէն:

205 ԶԷԱՅ ՄԵՐ ՀԱՆԱՊԱՋՈՐԴ

Այս հինգերորդ բանն է, և է մարմ-
նաւոր խնդիր: Զի որքան եմք ի մարմ-
նի, կարօտ եմք կերակրոյ, որ պահէ
210 զկենդանութիւն մարմնոյ: Եւ տես, զի
ոչ զաւելորդն խնդրեմք. ոչ ոսկի և ոչ
փափկութիւն, այլ՝ հաց: Եւ նշանակէ
այսու զհարկաւոր պէտս. կերակրուր,
ըմպելի, ծածկոյթ և այլն:

215 Հարց.—Զի՞նչ է ասելն՝ հաց մեր:
Պատասխան.—Զորս ինչ ցուցանէ:

Նախ.—Զհասարակաց կերակրում:
Որպէս աղօթքն հասարակաց, նոյն-
պէս կերակրում լիցի:

220 Երկրորդ.—Մեր՝ աշխնքն զմեր
հարկաւորն, և ոչ զաւելորդն:

Երրորդ.—Զմեր արդար վաստակն
և ոչ զօտարին, որ անհրաւորեամք է:

225 Զորրորդ.—Զհացն հոգեւոր, որ ի
մեր բնութենէն է և մեր է կերակրուր,
և ոչ անհրաւորից, կամ դիւաց, կամ
անասանց:

208. Ա.—իմ փխ. ի մեզ:

207. Գ.—որք փխ. որքան:

208. Գ.—կարօք փխ. կարօտ:

Երկրորդ.—Ինչպէս երկնքում, հրեշ-
տակների մէջ կատարյալ է Քո կամ-
քը, նոյնպէս էլ մեր մէջ թող կատար-
յալ լինի:

Երրորդ.—«Ինչպէս երկնքում, այն-
պէս [էլ] ամբողջ երկրում թող ար-
մատախիլ արվի մոլորությունը, մեղ-
քը և տնկվի ճշմարտությունն ու ար-
դարությունը»:

Զորրորդ.—Ինչպէս որ բոլոր երկ-
նավորներին և երկրավորներին եւ
խնամում, այնպէս էլ մեզանից յորա-
քանչյորին խնամիր, որովհետեւ երկ-
նային եմք հոգով և երկրավոր՝ մարմ-
նով:

Այս չորս կետերը հոգևոր խնդիր
են: Բայց սրանք այնտեղ մասնավոր-
վում են, իսկ երբ հարություն առնենք
հողից և դառնանք հարության որդի-
ներ, և Աստված գա Աստվածացած-
ների մէջ, և Նրա հետ թագավորեն
հանդերձալ կյանքում կատարյալ
[կլինեն]: Եվ կատարյալ՝ կամքով ու
սիրով, ինչպէս՝ «Դու, Հայր, իմ մէջ
ես, սրանք էլ թող մեր մէջ լինեն հա-
վիտյանս անվախճան», ամեն:

ՄԵՐ ՀԱՆԱՊԱՋՈՐԾԱ ՀԱՅԸ

Սա հինգերորդ խոսքն է և մարմ-
նաւոր խնդիրք է, որովհետեւ քանի
դեռ մարմնի մէջ ենք՝ կարիք ունենք
կերակրի, որը պահում է մարմնի կեն-
դանությունը: Եվ տես, որ ավելի բան
չենք խնդրում. ո՛չ ոսկի, ո՛չ էլ փափ-
կություն (ճոխություն), այլ՝ հաց: Եվ
սրանով նշանակում է հարկավոր
պէտքերը՝ կերակրուր, ըմպելիք, ծած-
կոյթ և այլն:

Հարց.—Ի՞նչ է մեր հացը ասելը:
Պատասխան.—Զորս բան է ցույց
տալիս.

Նախ.—Ընդհանուրի կերակրուր:
Ինչպէս աղօթքն է ընդհանուր, այն-
պէս էլ կերակրուր:

Երկրորդ.—Մեր՝ աշխնքն մեզ ան-
հրաժեշտը և ոչ ավելին:

Երրորդ.—Մեր արդար վաստակը
և ոչ օտարին, որ անհրաւորեամք է
[ձեռք բերված]:

Զորրորդ.—Հոգևոր հացը, որ մեր
բնութիւնից է և մեր կերակրուր, ոչ
թե անհրաւորներին կամ դեւերին,
կամ անասուններին:

210. Գ.—զաւելորդն:

210. Գ.—2իք զմեր:

- Համապագ՝ արքայսորէ ասէ, և որդն՝ անպակաս: Այսինքն միշտ տուր՝ ոչ ասելի և ոչ պակաս:
- 230 Իսկ ասելն տուր և ոչ թէ վաճառեա՝ Նախ.—Զի ձրի տայ: Երկրորդ.—Պարտական է տալոյ՝ որ ստեղծ մարմին, և ետ բերան:

Իսկ այսօր կրկին ցուցանէ.

- 235 Նախ.—Զատօրեայ կեանս մեր, զի անցեալն կորեալ է, և հանդերձեալն չէ ի միջի: Եւ այս մին օրս է: Երկրորդ.—Զայս արս խնդրեմք և ոչ զվաղութեանն, «զի վաղիւն վասն իւրն հոգասցէ» (Մատթ. 2 34):
- 240

ՎԵՑԵՐՈՐԴ ԲԱՆՆ. ԹՈՂ ՄԵԶ
ԶՊԱՐՏԻՄ ՄԵՐ, ՈՐՊԷՍ ԵՒ ՄԵՔ
ԹՈՂՈՒՄՔ ՄԵՐՈՑ ՊԱՐՏԱՊԱՆԱՑ

- Այս գառաւել մարդասիրութիւնն
- 245 ցուցանէ, որ լետ մկրտութեան շնորհին, յորժամ մեղանչեմք, դարձեալ թողութիւն գտանեմք:
- Հարց.—Ապա ընդէ՞ր ասէ Յովհաննէս. «Յետ ընդունելութեան գտաւ, թէ մեղանչեմք և գառաջինն ևս խնդրեցէ»:
- 250 Պատասխան.—Ասեմք, թէ անգեղջ մեղուցելոյն ասէ, իսկ աստ՝ զղջացելոյն: Եւ վկայ՝ յորժամ մեք այլոց թողումք, յայնժամ մերն թողուի:
- 255

- Իսկ որ պարտական ասէ, զի յորժամ լուծանեմք զհրամանն Աստուծոյ, պարտական եմք նմա: Եւ ի պահելն զպատուիրանն՝ պարտատէր եմք: Եւ երկոցունցն անդ հատուցանի անվճար կենօք:
- 260

- Նախ.—Գիտելի է ի բանէս, զի զմեզ պարտական ցուցանէ և պարտատէր: Այսինքն՝ Աստուծոյ և մարդոյ: Եւ յորժամ թողումք մարդոյ, թողութիւն առնումք յԱստուծոյ, որպէս ասէ. «Թէ թողուցոր մարդկան զյանցանս անցաւ, թողցէ և Հայրն ձեր ըզհանցանս ձեր» (Մատթ. 2 14):
- 265

221. Գ.—մի արդար:

230. Գ.—2իք թէ:

234. ԱԳ.—այս այսօրն:

235. Գ.—զանցեալն փխ. զի անցեալն:

243. ԲԴ.—2իք պարտապանաց:

Համապագ—ը օրեցօր է նշանակում, և որդ—ը՝ անպակաս, այսինքն՝ միշտ տուր, ո՛չ ասելի և ո՛չ պակաս:

Իսկ տուր ասելը և ոչ թե՛ վաճառիր. Նախ.—Որովհետև ձրի է տալիս:

Երկրորդ.—Պարտական է տալու, քանի որ ստեղծեց մարմինը և բերան տվեց:

Իսկ այսօր—ը երկու բան է նշանակում.

Նախ.—Մեր միօրյա կյանքը, որովհետև անցյալը կորած է, իսկ գալիքը հայտնի չէ: Եվ սա մեր մեկ օրն է:

Երկրորդ.—Այսօրվանն ենք խընդրում և ոչ՝ վաղվանը, որովհետև վաղըն իրենը կհոգա:

ՎԵՑԵՐՈՐԴ ԽՈՍՔԸ. ԹՈՂ ՄԵԶ
ՄԵՐ ՊԱՐՏՔԵՐԸ ԻՆՉՊԵՍ ԵՎ
ՄԵՆՔ ԵՆՔ ԹՈՂՆՈՒՄ ՄԵՐ
ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻՆ

Սա առավել մարդասեր լինելն է ցույց տալիս, որ մկրտության շնորհից հետո երբ մեղանչենք, դարձյալ թողություն գտնենք:

Հարց.—Ապա ինչո՞ւ է Հովհաննէսը ասում. «Ընդունելուց հետո գտաւ, որ եթէ մեղանչենք, անվճարն անդ չկարող ենք»:

Պատասխան.—Ասենք, թէ [այնտեղ] չզղջացող մեղավորի մասին է ասում, իսկ այստեղ՝ զղջացողի մասին: Եվ վկայությունը՝ երբ մենք թողնում ենք ուրիշների [մեղքը], այնժամ մերն է թողնվում:

Իսկ պարտական է ասում, որովհետև երբ խախտում ենք Աստծու հրամանը, պարտական ենք [դառնում] նրան, և երբ պահում ենք պատվիրանը, պարտատէր ենք: Եվ այդ երկուսի համար հատուցվում է անվճար կյանքով:

Նախ.—Այս խոսքից իմացվում է, որ մեզ պարտական ու պարտատէր է համարում, այսինքն՝ Աստծուն և մարդուն: Եվ երբ ներում ենք մարդուն, թողություն ենք ստանում Աստծուց: Ինչպէս ասում է. «Եթէ մարդկանց ներեք նրանց հանցանքները, ձեր Հայրն էլ կների ձեր հանցանքները»:

248. ԲԴԳ.—2իք հարց:

249. ԱԳ.—Գիտ փխ. գտաւ:

250. Գ.—2իք ևս:

252. ԲԳԴ.—2իք Պատասխան:

- 270 Երկրորդ.—Նստուցանել զմեզ դատար և կշիռ դատաստանին առ մեզ և որպէս զընկերին կշռեմք, նոյնպէս և զմերն կշռեմք:
- 275 Երրորդ.—Ձի իշխանութեան իրոյ զմեզ կցորդ անէ. Ձի «Աստուծոյ է թողոյ զմեզ» (հմմտ. Մրկ. Բ 7, Դուկ. Ե 21) որպէս ասէ յաւետարանին: Եւ զայն մեզ շնորհէ:
- 280 Չորրորդ.—Այլ իմն խոր տեսութիւն է բանին: Որպէս զամենայն բարի գործս մեք ի մմանէ ուսանիմք: Ըստ այնմ. «Ուսարոյք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիս» (Մատթ. ԺԱ, 29): Աստ ինքն ի մէնշ ուսանի զմարդասիրութիւնն. «Եթէ դու թողոյս՝ և ես ոչ թողում» (հմմտ. Մատթ. ԺԸ 35):
- 285 Հարց.—Եւ թէ ոչ թողումք, զի՞նչ լինի:
- 290 Պատասխան.—Նախ.—Ձի անհիծանեմք զմեզ, թէ որպէս ես ոչ թողի, այլոց, և դու մի թողոյ ինձ:
- Երկրորդ.—Ձի խաբեմք զնա լեզուաւ և ողորմեմք, թէ՛ ես ոչ թողի՝ դու ինձ թող:
- 295 Երրորդ.—Ձի յխակալն սատանայ է, որ ունի յիս ընդ Աստուծոյ, և հրեշտակաց, և մարդկան: Այսպէս և մեք զոյսն ի սրտի պահելով՝ հեռանամք յԱստուծոյ:
- 300

ԵԻԹՆԵՐՈՐԴ ԲԱՆՆ. ՄԻ ՏԱՆԻՐ
Ի ՓՈՐՁՈՒԹԻՒՆ

Նախ.—Ձխոնարհութիւնն ուսուցանէ՝ մի յանդուգն երթալ ի փորձութիւն:

- 305 Երկրորդ.—Մի տալ ի փորձութիւնն սատանայի, գուցէ ոչ համբերիցեմք, որպէս նա:
- Երրորդ.—Թէ առանց Քո օգնակաւորութեանդ մի տար ի փորձութիւն:
- 310 Հարց.—Աստուած ո՞րպէս տայ ի փորձութիւն:
- Պատասխան.—Աստուած զմարդ ի փորձութիւն ոչ տայ, այլ յորժամ մեք անձնիշխան կամօք ի չարն ընթանամք, թոյլ տայ Աստուած մեզ: Այն է ի փորձանք տալն, որպէս ասէր. «Ես խստացուցի զսիրտ փարաւոնի» (Ելք
- 315

Երկրորդ.—Մեզ դատարար է կարգում, և դատաստանի կշիռը մեզ մոտ է, և ինչպէս որ ընկերոջն ենք կըշռում, այնպէս էլ մերն ենք կշռում:

Երրորդ.—Որովհետեւ մեզ կցորդ է դարձնում իր իշխանութեանը, քանի որ «Աստուծոն է մեղքերը թողնելու իրավունքը», ինչպէս ասում է ավետարանում, և այն մեզ է շնորհում:

Չորրորդ.—Այս խոսքը մի ուրիշ խոր իմաստ ունի, որ բոլոր բարի գործերը մենք նրանից ենք սովորում, ըստ այնմ. «Սովորեք ինձնից, որովհետեւ հեզ եմ և սրտով՝ խոնարհ»: Այստեղ ինքն է մեզանից սովորում մարդասիրությունը. «Եթէ դու ներես, ես էլ կներեմ, և եթէ դու չներես, ես էլ չեմ ների»:

Հարց.—Իսկ եթէ չներենք, ի՞նչ կլինի:

Պատասխան.—Նախ.—Որ անհիծում ենք մեզ, թէ ինչպէս ես ուրիշներին չներեցի, Դու էլ ինձ մի ներիր:

Երկրորդ.—Որ խաբում ենք Նրան լեզվով և սիրաշահում, թէ՛ ես չներեցի, Դու ինձ ներիր:

Երրորդ.—Որ յխակալը սատանա է, որ Աստուծո, հրեշտակների և մարդկանց դեմ յիս ունի: Այսպէս էլ մենք յիսը սրտում պահելով՝ հեռանում ենք Աստուծոց:

ՅՈՐԹԵՐՈՐԴ ԽՈՍԹԸԼ. ՄԻ ՏԱՆԻՐ
ԴԵՊԻ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ

Նախ.—Խոնարհությունն է սովորեցնում. հանդուգն կերպով փորձության չզնալ:

Երկրորդ.—Չենթարկել [մեզ] սատանայի կրած փորձությանը. գուցէ չդիմանանք ինչպէս նա:

Երրորդ.—Թե առանց Քո օգնության մի տանիր դեպի փորձություն:

Հարց.—Աստուած ինչպէս է փորձության ենթարկում:

Պատասխան.—Աստուած մարդուն փորձություն չի տալիս, այլ երբ մենք անձնիշխան կամքով դեպի չարն ենք ընթանում, Աստուած մեզ թոյլ է տալիս: Այդ է փորձանքի ենթարկելը, ինչպէս ասում էր. «Ես խստացրի

270. Դ.—2իք նստուցանել զմեզ դատարար և կշիռ դատաստանին առ մեզ և որպէս:

281. ԱԲ.—գործ փիւ. գործս:

282. ԱԲԴ.—2իք յինէն:

283. ԱԲ.—2իք սրտիս:

286. Բ.—թողուցու փիւ. թողու:

293. ԱԲ.—2իք զի:

303. Գ.—զի զխոնարհութիւն:

310. ԱԲԴ.—2իք Աստուած:

- Ժ 1), այսինքն, թող տուի չարանալ արտին:
- 320 **Հարց.**—Աստ ասէ մի տար ի փորձութիւն: Իսկ առաքեալ ասէ. «Երանեալ է այն, որ համբերեացէ փորձանաց, զի աոցէ զպսակն կենաց» (Յակոբ Ա. 12):
- 325 **Պատասխան.** Կրկին է փորձութիւն՝ չար և բարոյ: Չար է, որ մեղօք փորձիմք ի մէջ կամ ի սատանայէ: Յայնմանէ հրաժարելի է: Եւ բարի, որ յալմէ վասն հաւատոց և օրինաց փորձիմք: Այսմ համբերեալ պսակէ:
- 330

ՈՒԹԵՐՈՐԴ. ԲԱՆՆ. ԱՅԼ ՓՐԿԵԱԼ
Ի ԶԱՐԷ

- Նախ.—**Չար** աստ զսատանայ կոչէ և անհաշտ պատերազմ հրամայէ ունել ընդ մնա:
- 335 **Երկրորդ.**—Չար է սատանայ ոչ ի բնէ, այլ կամաւ չարացաւ և անգեղջ մնաց ի կամքն չար:

- 340 **Երրորդ.**—Վասն բազում չարութեանն բազում անուն կոչի մնա, որպէս դև, սատանայ, բեեղզեբող, այս. մոյնպէս փորձութիւն և չար կոչի:

- 345 **Չորրորդ.**—Զայն խրատէ, թէ ոչ է պարտ առ ընկերն զայրանալ, այլ զամենայն չարութիւն ի մա ընկեմու, զի մա է պատճառ ամենայն չարեաց:

- Հարց.**—Ո՞ր է առաւել չար. այն, որ ի բնէ ունի, թէ այն, որ կամօք ստանալ:
- 350

- Պատասխան.**—Ասեմք, ի բնէ չար, որպէս գազանք, և սուր, և հուր, զի այրէ: Արդ՝

- 355 **Նախ.**—Որ ի բնէ ունի՝ ոչ է կամօք և ոչ գիտութեամբ: Եւ որ ստացեալ է կամօք և գիտութեամբ է և առաւել չար:

- 360 **Երկրորդ.**—Որ բնութեամբ գործէ՝ ոչ ինչ մեղանչէ, որպէս անասունք: Եւ որ կամօք՝ մեղանչակաւ է, որպէս մարդ:

Երրորդ.—Որ բնութեամբ ունի՝ զչար՝ այլոյ չար է և ինքեան բարի, որպէս խայթոց և թոյնք սողնոց: Իսկ որ կա-

վարավորն սիրտը,՝ այսինքն արտին թույլ տվի չարանալ:

Հարց.—Այստեղ ասում է՝ մի տաճիր դեպի փորձություն: Իսկ առաքյալն ասում է. «Երանելի է [այն] մարդը, որ կոխմանա փորձանքներին, քանի որ կստանա կյանքի պսակը»:

Պատասխան.—Փորձությունը կըրկնակի է՝ չար և բարի: Չար է, որ մեղքով ենք փորձվում մեզնից կամ սատանայից. դրանից պետք է հրաժարվել: Եվ բարի [է], որ ուրիշից հավատքի և օրենքի համար ենք փորձվում: Սրան համբերողին կպսակի:

ՈՒԹԵՐՈՐԴ. ԽՈՍԺԸ. ԱՅԼ ՓՐԿԻՐ
ԶԱՐԻՑ

Նախ.—**Չար** այստեղ սատանային է կոչում և հրամայում է անհաշտ պատերազմ մղել մրա դեմ:

Երկրորդ.—Սատանան ոչ թէ ի բնէ չար է, այլ [իր] կամքով չարացավ և չար կամքի մեջ առանց զղջման մընաց:

Երրորդ.—Բազում չարությունների համար քաղմայօքիլ անուններ են տրվում մրան, ինչպես՝ դև, սատանա, բեեղզեբող, այս. մույնպէս փորձություն և չար է կոչվում:

Չորրորդ.—Այն է խրատում, թէ պետք չէ ընկերոջ դեմ զայրանալ, այլ բոլոր չարությունները մրան (սատանային) վերագրել, որովհետև բոլոր չարիքների պատճառը մա է:

Հարց.—Ո՞րն է առավել չար՝ այն, որ ի բնէ ունի, թէ այն, որ [իր] կամքով է ստանում:

Պատասխան.—Կասենք՝ ի բնէ չարը, ինչպես գազանները, սուրը և հուրը, որովհետև այրում է: Արդ՝

355 **Նախ.**—Այն որ ի բնէ ունի, կամովին չէ, և ոչ էլ գիտակցաբար: Իսկ որ ստացել է, [ապա] կամովին և գիտակցաբար է և առավել չար:

Երկրորդ.—Ով որ բնությամբ է գործում, ոչ մի մեղք չի գործում, ինչպես անասունները: Իսկ որ կամովին է [գործում], մեղավոր է, ինչպես մարդը:

Երրորդ.—Ով որ բնությամբ ունի չարը, ուրիշի համար չար է, բայց ինքն իրեն համար՝ բարի, ինչպես սո-

342. ԱԲ—2իք և:

346. ԱԲ—2իք ամենայն:

347. Բ—2իք չար:

353. Գ—բնութենէ փխ. բնէ:

355. Գ—2իք է և:

361. Դ—2իք զչար:

365 մօք է, ինքեան է չար և այլոց, որպէս սատանայ. մախ՝ զինքն վնասէ, և ապա՝ զմարդ: Ապա և յայտ է, որ կամօք է, առաւել չար է: Եւ այն՝ զի կամքն սատանայի անփոփոխ է ի չարն:

370 **Հարց.**—Զի՞նչ է փորձութիւն և զինչ չար:

Պատասխան.—Նախ.— Փորձութիւն է խաբէութիւնն սատանայի, որպէս խայծ թռչնոց: Եւ չար է բոլորն զօրութեամբ պատերազմելն:

375 Երկրորդ.— Փորձութիւն է զգայութեանց սխալումն, և չար՝ կամաւ և գիտութեամբ մեղանշումն:

380 Երրորդ.— Փորձութիւն է մարմնոյս տանջանք, և չար է հոգւոյս և յաւիտենից տանջանք:

Յայցսանէ աղօթեմք փրկել զմեզ:

ԻՆՆԵՐՈՐԴ ԲԱՆՆ. ԲՈՅ Է
ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ
ԵՒ ՓԱՌՔ ՅԱՒԻՏԵԱՆ

385 **Քո՛յ՝** այսինքն յորժամ Նորա է արքայութիւն, ապա ոչ յումեքէ երկնչիմք մեք: Եւ յորժամ Նորա է զօրութիւն՝ ոչ որ կարէ հակառակիլ մեզ: Ապա թէ որ հակառակի, գիտցիր, զի ի թոյլ տալոյն Աստուծոյ է առ ժամանակ մի:

390 **Փառք յաւիտեան.**— Զայն ասէ, թէ ոչ միայն յամենայն շորջանակի չարեաց ազատէ, այլ և յաւիտենից փառաւորէ:

395 ՏԱՄՆԵՐՈՐԴ ԲԱՆՆ. ՈՐ ԱՍԷ
ԱՄԵՆ

Այսինքն՝ եղիցի, կամ ստույգ և ճշմարիտ:

ՎԱՄՆ ԿԱՐԳԻ ԱՂՈԹԻՑ

400 **Հարց.**— Զինչ կարգ ունի աղօթքս տէրունի:

Պատասխան.— Արդ, վասն կարգի աղօթիցն:

367. Դ—այլ: Ա—կամօքն փխ. կամքն:

373. Դ— խեծ, Գ—զօրութեան:

385. ԱԳ—2իք քոյ:

386. Ա—յումեք:

դունների խայթոցը և թույնը: Իսկ ով որ կամովին է, ինքն իրեն, մաւս ուրիշների համար չար է, ինչպէս սատանան. մախ իրեն է վնասում և ապա մարդուն: Ուրեմն պարզ է՝ ինչ որ կամովին է, առաւել չար է: Նաև, որ սատանայի կամքը չարությամբ անփոփոխ է:

Հարց.— Ի՞նչ է փորձությունը և ի՞նչ է չարը:

Պատասխան.— Նախ.— Փորձություն է սատանայի խաբէությունը, ինչպէս թռչունների խայծը, և չար է՝ բոլորն զորությամբ պատերազմելը:

Երկրորդ.— Փորձություն է զգայարանների սխալվելը և չար՝ կամքով և գիտությամբ մեղանշելը:

Երրորդ.— Փորձություն է մեր մարմնի տանջանքը, և չար է մեր հոգու հավիտենական տանջանքը:

Սրանցից մեզ փրկելու համար ենք աղօթում:

ԻՆՆԵՐՈՐԴ ԽՈՍՔԸ. ԲՈՆՆ Է
ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓԱՌՔԸ

Քո՛յ՝ այսինքն, երբ Նրանն է արքայությունը, ապա մենք մեղքից չենք վախենում: Եվ երբ Նրանն է զօրությունը, ոչ որ չի կարող հակառակվել մեզ: Իսկ եթե որևէ մեկը հակառակվի, իմացիր, որ Աստված է որոշ ժամանակով թույլ տվել:

Հավիտենական փառք.— Այն է ասում, թե ոչ միայն շրջապատի բոլոր չարերից է ազատում, այլ հավիտենապէս փառաւորում է:

ՏԱՄՆԵՐՈՐԴ ԽՈՍՔԸ. ՈՐ ԱՍՈՒՄ Է՛
ԱՄԵՆ

Այսինքն՝ թող լինի, կամ ստույգ ու ճշմարիտ է:

ԱՂՈԹՔԻ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հարց.— Տերունի աղօթքը ի՞նչ կարգ ունի:

Պատասխան.— Արդ, աղօթքի կարգի մասին:

392. Գ—2իք չարեաց:

395. Գ—2իք որ ասէ:

402. ԳԴ—2իք վասն:

2որս կերպ ուսուցին մեզ հարքն
405 սուրբ.

Նախ.—Ձի Ժ բան է աղօթիցն՝ ի
դէմս Երրորդութեանն՝ երիցս կըրկ-
նեալ. առաջին ի Հայր, Սուրբ անունն՝
Որդոյ, արքայութիւնն՝ Հոգոյն։ Այս-
410 պէս. կամքն՝ Հօր, հացն՝ Բանին, թո-
ղութիւնն՝ Հոգոյն։ Այսպէս. փորձանաց
փրկէ՝ Հայր, ի չարեաց ազատէ՝ Որդի,
զօրացուցանէ՝ Հոգին Սուրբ։

Երկրորդ կարգն ի մեզ վերաբերի,
415 զի նախ ծնանիմք աւազանաւ և քրիս-
տոնեայ անուանիմք և թագաւորեմք
հոգով։ Եւ ապա, զկամս Նորա կա-
տարելով, հաղորդիմք հացին, և տկա-
րացեալ թողութիւն խնդրեմք։ Յետ ո-
420 յոյ ի փորձութեանց մեղաց և ի չար
տանջանաց փրկութիւն և զփառացն
հանգիստ խնդրեմք։

Երրորդ կարգն է իսկագոյն։ Առա-
ջին բանն՝ ի Հայր, որ անսկիզբն է և
425 անպատճառ և պատճառ Որդոյ ծը-
նընդեան և Հոգոյ բոլորման։

Երկրորդ բանն՝ յՈրդի, որ հաւասար
է Հօր և սրբեաց զմեզ։

Երրորդ բանն՝ ի Հոգին Սուրբ, որ
430 արքայ է ընդ Հօր և Որդոյ, և ի մեզ
իջանէ շնորհք Նորա։

Չորրորդ բանն՝ յիշէ և զերկնաւոր-
քն, զի յետ երից անձնաւորութեանցն
չորրորդ են իմացական բնութիւն։ Ի
435 յայս միտս և չորեքկերպեան տեսա-
նին։

Հինգերորդ բանն ակնարկէ առ մեզ,
զի հինգերորդ ենք բանական բնու-
թիւն յետ երկնայնոցն դասուց, այլն ի
440 չորից տարերց և յիմանալի ոգոց։ Այ-
լն հինգ ունիմք զգայութիւնք՝ ներքին
և արտաքին։

Վեցերորդ բանն թողութիւն խընդ-
րեմք, զի յետ հինգ զգայութեամբ մե-
445 ղացն, ըստ կարգի, թողութիւնն է։ Այ-
լն Զ շարժմամբ մեղանչեմք՝ ըստ Զ
դարու կենցաղոյս։

Եփեմերորդ բանն՝ փրկել ի փորձա-
նաց, զի փորձութիւնք մեղացն է են

2որս կերպ մեզ սովորեցրեցին
սուրբ հայրերը.

Նախ.—Որ տաւ խոսքից է բաղ-
կացած աղոթքը. ուղղված Երրորդու-
թյանը՝ երեք անգամ կրկնված. առա-
ջինը՝ Հորը, սուրբ անունը՝ Որդուն,
արքայությունը՝ Հոգուն։ Այսպէս.
կամքը՝ Հորը, հացը՝ Բանին, թողու-
թյունը՝ Հոգուն։ Այսպէս, փորձանք-
ներից փրկում է Հայրը, չարքներից
ազատում է Որդին, ուժ է տալիս
Սուրբ Հոգին։

Երկրորդ կարգը մեզ է վերաբերում,
որովհետև նախ ծնվում ենք ավագա-
նով և քրիստոնյա ենք անվանվում ու
թագավորում հոգով։ Եվ ապա, Նրա
կամքը կատարելով՝ հաղորդվում ենք
հացին և տկարացած՝ թողություն ենք
խնդրում։ Որից հետո մեղքի փորձու-
թյուններից, չար տանջանքներից
փրկություն և փառաց հանգիստ ենք
խնդրում։

Երրորդ կարգը ճշմարտագույնն է։
Առաջին խոսքը՝ Հորն [է վերաբեր-
վում], որ անսկիզբ է և անպատճառ
և Որդու ծննդյան ու Հոգու բխման
պատճառն է։

Երկրորդ խոսքը՝ Որդուն, որ Հորը
հավասար է և մաքրեց մեզ։

Երրորդ խոսքը՝ Սուրբ Հոգուն, որ
արքա է Հոր և Որդու հետ, և մեզ վրա
է իջնում Նրա շնորհքը։

Չորրորդ խոսքը՝ հիշում է և երկ-
նավորներից, որովհետև երեք անձ-
նավորություններից հետո չորրորդն է
իմացական բնությունը։ Այս մտքում
չորս կերպով էլ երևում են։

Հինգերորդ խոսքը ակնարկում է
մեզ, որովհետև մենք հինգերորդ բա-
նական բնություն[ն] ենք՝ երկնային-
ների դասից, նաև չորս տարրերից և
իմանալի հոգիներից հետո։ Այլն հինգ
զգայարան ունենք՝ ներքին և արտա-
քին։

Վեցերորդ խոսքը՝ թողություն ենք
խնդրում, որովհետև հինգ զգայական
մեղքերից հետո, ըստ կարգի, թողու-
թյունն է։ Նաև վեց շարժումներով մե-
ղանչում ենք՝ ըստ վեց դարերի մեր
կենցաղի։

Յոթերորդ խոսքը՝ փորձանքներից
փրկելը, որովհետև մեղքերի փորձու-

404. Գ.—կերպ փխ. կերպս։

425. Բ.—2իք և անպատճառ։

429. ԱԲԳ.—2իք Սուրբ։

438. Գ.—2իք նմք։

440. ԱԲԳ.—ոգոյ փխ. ոգոց։

444. ԱԲ.—մեղանացն։

448. ԱԲ.—փրկիլ։

- 450 գլխաւորք և է են զգայութիւնք և գործիք նոցա, և յէ դարուս փորձիմք և այլ ոչ նա:

Ութերորդ բանն՝ փրկեալ ի չարէ, որ է տանջանք դժոխայնոցն յԼ-երորդն դարում:

- 455 Եւ իններորդն՝ թագաւորել ընտրելոցն ընդ Թ դասուց հրեշտակաց:

- 2որրորդ կարգ. ասեն ոմանք եթն բան գոյ խնդրուածոցն. երեքն՝ հոգեւոր, զի հոգին եռամասնեայ է, և չորսն մարմնաւոր, գոյացեալ ի Դ տարերաց: Եւ չորս խնդիրքն աստ և այժմ կատարի, և Գ անդ ի հանդերձեալն: Եւ զի պատուական է հոգին, քան զմարմինն, նախ զհոգևորն խնդրեմք, որ է սուրբ անուան, և արքայութիւնն, և կատարումն կամացն Աստուծոյ: Եւ ապա զմարմնաւորն, որ է հացն, և թողութիւնն, և ի փորձութեանց մեղաց և չարեաց պատուհասից զերծանիլ: Այս է բանս խնդրուածք է: Եւ առաջինն նուերք և գոհութիւն, իսկ ամենն՝ կամ եղիցի, զոր ինչ խնդրեցաք, կամ ստոյգ, ճշմարիտ է բանս աղօթից, կամ բոլոր, յամենեցունց և յամենայն յաիտեանս է փառք և գովաբանութիւնն Աստուծոյ:

Այսքան առ այս:

452. ԱԲ—2իք այլ, Գ—2իք այլ ոչ:
461. ԱԲ—2իք Դ:

թյուններից գլխավորները յոթն են, և յոթն են զգայությունները և նրանց գործիքները, և յոթերորդ դարում ենք փորձվում և այլևս չենք [փորձվելու]:

Ութերորդ խոսքը՝ փրկիր չարից-ը, որը դժոխքի տանջանքն է ութերորդ դարում:

Եվ իններորդը՝ ընտրյալների թագաւորելը հրեշտակների ինն դասերի հետ:

2որրորդ կարգ. ոմանք ասում են. խնդրանքների մեջ յոթ խոսք կա՝ երեքը՝ հոգևոր, որովհետև հոգին եռամասնյա է, և չորսը՝ մարմնավոր, գոյացած չորս տարրերից: Եվ չորս խնդրանքները այստեղ և այժմ են կատարվում, իսկ երեքը՝ պիտի կատարվեն այնտեղ՝ հանդերձալ կյանքում: Եվ որովհետև հոգին ավելի պատվական է, քան մարմինը, նախ հոգևորն ենք խնդրում, որ է՝ սուրբ անունը, արքայությունը և Աստծու կամքի կատարումը: Եվ ապա մարմնավորը, որ հացն է, թողությունը և մեղքերի փորձություններից ու չար պատուհասներից ազատվելը: Այս յոթ խոսքերը խնդրանքներ են. առաջինը՝ նվերներ և գոհություն, իսկ ամեն-ը՝ կա՛մ թող լինի, ինչ որ խնդրեցինք, կա՛մ ստույգ, ճշմարիտ է այս աղոթքիս խոսքը, կա՛մ ամեն ինչում և բոլորի համար հավիտեանական է Աստծու փառքն ու գոհաբանությունը:

Այսքանը սրա մասին:

472. ԱԲ—գովութիւն փխ. գոհութիւն:

